



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության՝ 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 332³-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ.

«3. Փաստաբանին՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասում «հետաքննություն կատարող անձին» բառերից հետո լրացնել «փաստաբանին» բառը, իսկ «այլ ակտի կատարման» բառերից հետո՝ «փաստաբանի մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սույն օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին շրջանում հաճախ են դարձել փաստաբաններին՝ իրենց մասնագիտական գործունեության ընթացքում վիրավորելու և զրպարտելու դեպքերը: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ միայն քաղաքացիաիրավական պատասխանատվությունը արդյունավետ միջոց չի հանդիսանում փաստաբանի արժանապատվությունը և գործարար համբավը պաշտպանելու համար: Այս



**Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության
քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին**

տեսանկյունից, գտնում ենք, որ քրեական պատասխանատվություն նախատեսելը պրկենտիվ (կանխիչ) նշանակություն կունենա:

Ինչ վերաբերում է փաստաբանին զրպարտելու արարքը քրեականացնելու առաջարկին, ապա, նախ և առաջ, կարևոր է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածը՝ գործող խմբագրությամբ, արդեն իսկ քրեորեն հետապնդելի արարք է որակում դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելը: Հետևաբար՝ նշված անձանց ցանկում փաստաբանին, որպես արդարադատության իրականացմանը նպաստող կարևոր դերակատարի, չներառելը փաստաբանների պալատը որակում է որպես լուրջ բացթողում, որն անհրաժեշտ է լրացնել:

Հատկանշական է, որ նույն օրենսգրքով քրեական պատասխանատվություն է նախատեսվում նաև Մարդու իրավունքների պաշտպանին, կապված նրա լիազորությունների իրականացման հետ, վիրավորելու համար (հոդված՝ 332²):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք վճիռներում հատուկ ընդգծել է փաստաբանի մասնագիտության կենտրոնական դերն արդարադատության համակարգում և իրավունքի գերակայության ապահովման գործում: Ինչպես նշել է Եվրոպական դատարանն, առանց անհարկի խոչընդոտների իրենց մասնագիտական գործունեությամբ զբաղվելու փաստաբանների ազատությունը հանդիսանում է ժողովրդավարական հասարակության էական բաղադրիչ և անհրաժեշտ նախապայման Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի պահանջների իրագործման համար¹:

Հետևաբար՝ անվիճելի է, որ փաստաբանին՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելը և զրպարտելն ունի հանրային վտանգավորության բարձր աստիճան, քանի որ այն իր բացասական

¹ Էլչին ու ուրիշներն ընդդեմ Թուրքիայի վճիռ, գանգատներ թիվ [23145/93](#) և [25091/94](#), կետ 669.



**Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության
քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին**

ազդեցությունն է ունենում ոչ միայն փաստաբանի անձի, այլ նաև վերջինիս կողմից իրականացվող մասնագիտական գործունեության արդյունքի վրա և հանդիսանում է վերջինիս վրա ճնշում գործադրելու և նրա մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու միջոց:

Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքը լրացնել և պատասխանատվություն նախատեսել փաստաբանին՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելու և զրպարտելու համար:

Նախագծի ընդունմամբ փաստաբանը հնարավորություն կունենա լիարժեք իրացնել ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունները, կապահովվի փաստաբանի անխոչընդոտ աշխատանքը և իրավաբանական օգնության կարիք ունեցող անձի իրավունքների լիարժեք իրացումը:

Նշված առաջարկի համար հիմք է հանդիսացել նաև եվրոպական և ԱՊՀ մի շարք երկրների (Օրինակ՝ Ֆրանսիա, Գերմանիա, Վրաստան, Ռուսաստանի Դաշնություն), ինչպես նաև ԱՄՆ փորձը:

ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐԲՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԳՈՐԾՈՂ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ նոր իրավական ակտերի ընդունման, գործող իրավական ակտերում լրացումներ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:



*Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության
քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին*

ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՐՃԱՏՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության եկամուտների կրճատում, սակայն ծախսերի ավելացում չի նախատեսվում: